

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ  
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ  
ԵՎ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

022201.01.7-«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ  
ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բովանդակություն	
ՄԱՍԻ. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....	4
ՄԱՍԻԻ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ.....	33
030400 «Պատմություն» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք.	35
I. Ընդհանուր մասնագիտական դասընթացների(ԸՄԴ) կրթամաս.....	35
II. Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս(ՊԴ).....	36
III. Կամընտրական դասընթացների կրթամաս.....	44
IV. Այլ բաղադրիչներ.....	50

## ՆԱԽԱԲԱՆ

2014 թվականը մեր բուհի պատմության մեջ եղավ իրադարձային. ՀՀ Կառավարության ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ ՊՈԱԿ-ը վերանվանվեց, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան ՊՈԱԿ: Անշուշտ, կատարվածը սոսկ անվանափոխություն չէ, քանի որ իրականում դրանից հետևում են բազմաշերտ բովանդակային փոփոխություններ և դրանցից բխող մարտահրավերներ, որոնց այսօր փորձում է դիմակայել մեր համալսարանը:

Համալսարանի վերափոխվելով՝ բուհում առաջին հերթին փոփոխվում են նաև այն ուղղությունները, որոնք նախկինում գերակայում էին մեր բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ ներկայումս վերանայման խնդիր ունեն համալսարանի տեսլականն ու առաքելությունները և դրանցով պայմանավորված հետագա գործունեությունը:

Կատարվածը սոսկ անվանափոխություն չէ նաև այն առումով, որ նրանով համալսարանին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել կրթություն իրականացնելու համալսարաններին հատուկ ավանդական մասնագիտություններով, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բավարարելու մեր տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքները:

Այն ժամանակաշրջանը, որում Վանաձորի պետական համալսարանը ծավալում է իր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որը կատարվում է համալսարանում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Խոսքը վերաբերում է համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մասնավորապես՝ բուհի ինքնավարությանը, որը ենթադրում է անկաշկանդ վերաբերմունք կազմակերպչաիրավական, ֆինանսատնտեսական, հաստիքային և ակադեմիական ոլորտներին, կառավարմանը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը, որակի ապահովմանը, գիտական գործունեությանը և այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են համալսարանում, և որոնք բոլորը միասին ձևավորում են տեսլականից դեպի իրականը տանող ճանապարհը:

Համոզված են, որ Վանաձորի պետական համալսարանն ունի մտավոր և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ճիշտ ներդրմամբ կարելի է հասնել հաջողության: Համոզված են, որ համախոհությամբ, փոխադարձ հանդուրժողականությամբ, ինչպես նաև պետության ու հասարակության առջև հաշվետվողականությամբ ու պատասխանատվությամբ առաջնորդվելու դեպքում միասին կհաղթահարենք արդի ժամանակաշրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

ՌԵԿՏՈՐ՝

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

## ՄԱՍ I.

### Ա ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՎ ՈՒՄՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

#### 1. Ընդհանուր դրույթներ

Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ: Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոն համակարգերի ներդրումը, որը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

1. Սույն կանոնակարգը հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի», «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

2. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած են ճանաչվում «ՎՊՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների կազմակերպման, գնահատման և հաշվառման կանոնակարգը»՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 29.10.2007թ և «ՎՊՀ-ում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցը»՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 07.03.2008թ.:

3. Սույն կանոնակարգում ներկայացված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, համակարգի բնութագրիչներ:

## 2. Կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները

4. Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՎՊՀ-ի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում.

- Բակալավրիատը բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտուն դասընթացներ: ՎՊՀ-ում բակալավրիատի տևողությունը 4 ուսումնական տարի է:

- Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տևողությունը 1-2 տարի է (ՎՊՀ-ում՝ 2 տարի), հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:

- Ասպիրանտուրան հետբուհական կրթության աստիճան է: Ասպիրանտուրայի տևողությունն առկա ուսուցման համակարգում 3 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 4 տարի:

- Ուսումնական տարին ուսանողի 40 շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

- Կարողությունը (կոմպետենցիան) գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) և ընդհանուր (անկախ բնագավառից):

- Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:

- Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:

- ECTS Կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

### **3. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները**

5. ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

6. կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

7. կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

8. ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

9. կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

10. կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

### **4. Կրեդիտային համակարգի կարևոր հատկանիշները**

11. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

12. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:

Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

13. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

## **5. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները**

Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ,

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

14. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորությունն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան:

15. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսին նախապատվություն տալուց,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

#### **6. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրերի աշխատածավալը**

16. ՎՊԳ-ում մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր (10% թույլատրելի շեղումով), ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

17. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 կրեդիտային միավորին:

18. ՎՊԳ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է աշնանային և գարնանային կիսամյակներով: Ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ: 1-ին և 2-րդ ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որից. տեսական ուսուցում՝ 17 շաբաթ, քննաշրջան՝ 3 շաբաթ: Ուսումնառության 3-րդ կիսամյակի տևողությունը 20 շաբաթ է, որոնցից 13 շաբաթ՝ տեսական ուսուցում, 4 շաբաթ՝ մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա, 3 շաբաթ՝ քննաշրջան: 4-րդ կիսամյակի տևողությունը 19 շաբաթ է (8 շաբաթ՝ տեսական ուսուցում, 2 շաբաթ՝ գիտահետազոտական պրակտիկա, 1 շաբաթ՝ քննաշրջան, 8 շաբաթ՝ մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն):

Մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 15-22 ժամ:



20. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:

21. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

## **7. Դասընթացները և կրթական մոդուլները**

22. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

23. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

24. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, և ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

## **8. Կրեդիտների հատկացումը**

25. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատածամանակի իրատեսական կանխատեսումից:

26. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:

27. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար նախընտրելի է սահմանել ամբողջական թվերով արժեքներ:

28. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

29. ՎՊՅ-ում ընդունվում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտային միավորների լսարանային և արտալսարանային աշխատածավալների հետևյալ մոտավոր հարաբերակցությունը.

Մագիստրատուրայում՝

- 3 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 4 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 2 ժամ ինքնուրույն աշխատանք, Ընթացիկ և հանրագումարային ստուգումների համար.
- Քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:

30. Գիտամանկավարժական պրակտիկային տրվում է 6, իսկ գիտահետազոտական պրակտիկային՝ 3 կրեդիտային միավոր:

31. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում նաև ռեֆերատի ու զեկուցման) կատարումը և պաշտպանությունը գնահատվում է 3 կրեդիտային միավորով:

33. Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 12 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 0,3,3,6), իսկ թեզի շարադրման և պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր:

34. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարի համար հատկացվում է 8 կրեդիտային միավոր (2-ական միավոր յուրաքանչյուր կիսամյակի համար):

### **9. Ուսումնական ծրագրերը, դասընթացները (կրթական մոդուլները) և ավարտական պահանջները**

38. Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է երկու հատված՝ ուսումնական ծրագիր և գիտահետազոտական աշխատանք:

Ուսումնական ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական կրթամասերից՝

- Ընդհանուր դասընթացներ,
- Մասնագիտական պարտադիր դասընթացներ,
- Կամընտրական դասընթացներ,

Կրթական ծրագրի գիտահետազոտական կրթամասը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- Գիտա-մանկավարժական պրակտիկա
- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար,
- Գիտահետազոտական պրակտիկա,
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով,
- Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթացն ունի իր դասիչը:

Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր խմբին, ինչպես նաև յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը, ինչպես նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:  
Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

Դասընթացներ	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր դասընթացներ	3	1
Մասնագիտական պարտադիր դասընթացներ	58	11
Կամընտրական դասընթացներ	19	4
Գիտա-մանկավարժական պրակտիկա	6	1
Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	8	4
Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով	11	3
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն	12	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>26</b>

### 10. Կրթական ծրագրի ուսումնական հատված Պարտադիր դասընթացներ

#### 1. Ընդհանուր դասընթացներ

Տվյալ ենթաբաժնի դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ) <sup>1</sup>	Կիսամյակ	Գնահատման ձևը
Տեղակատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	40(14/ 0/26/ 0)	1	ստուգարք

1) դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, Լ-լաբորատոր աշխատանք

### Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մերձավոր արևելյան արդի հիմնախնդիրները	5	50(36/14 /0/ 0)	2	քննություն
Հին Հունաստանի մշակույթի գեներգիսը	5	50(36/14 /0/ 0)	1	քննություն
Հարավսլավիայի մասնատումը	4	40(20/10 /0/ 0)	3	քննություն
ԽՍՀՄ առաջնորդները	7	68(48/20 /0/ 0)	2	քննություն
Արդի միջազգային քաղաք. կազմ.	5	50(36/18/0/ 0)	4	քննություն
Քաղաքակրթությունների պատմություն	5	50(36/14 /0/ 0)	3	քննություն
20-րդ դարի ականավոր ղեկավարները	5	50(36/14 /0/ 0)	3	քննություն
Վերածննդի դարաշրջանը	5	50(36/14 /0/ 0)	1	քննություն
Մասոնության պատմություն	7	68(48/12/0/ 0)	4	քննություն
Հայաստանը արդի միջ. հարաբերություններում	4	40(28/12 /0/ 0)	3	քննություն
Հայ գաղթօջախների պատմություն	5	50(36/14/0/ 0)	1	քննություն

### Կամընտրական դասընթաց

Կամընտրական դասընթացի ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
ՀՀ արտաքին քաղաքականությունը 1918-1920թթ.	4	40(28/12 /0/ 0)	1	քննություն
Ցեղասպանությունների պատմություն				
Հայ պարբերական մամուլի պատմություն	5	50(36/14 /0/ 0)	2	քննություն
Ժամանակակից Սփյուռքը				

Ֆիդայական շարժումը	5	50(36/14 /0/ 0)	2	քննություն
Հայ ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին				
Գունավոր հեղափոխությունները	5	50(36/14 /0/ 0)	1	քննություն
ԽՍՀՄ փլուզումը: ԱՊՀ կազմավորումը				

### Մանկավարժական գիտամանկավարժական պրակտիկա

Ոչ դասընթացային կրթական մոդուլ՝ ամրագրված կրեդիտային միավորներով

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մանկավարժական պրակտիկա	6	3	քննություն

### Գիտահետազոտական աշխատանք

Մագիստրոսական կրթական ծրագրի գիտահետազոտական հատվածն ընդգրկում է ամրագրված կրեդիտային միավորներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	8	1,2,3,4	ստուգարք
Գիտահետազոտական աշխատանք մագիստ. առենախոս. թեմայով	9	2,3,4	ստուգարք
Գիտահետազոտական պրակտիկա	3	4	ստուգարք
Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն	12	3, 4	պաշտպանություն՝ 100 միավորանոց գնահատականով

## 11. Ավարտական պահանջներ

### Ընդհանուր ավարտական պահանջներ

Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար «Պատմություն» մասնագիտության մագիստրոսը պետք է հաջողությամբ յուրացնի 120 կրեդիտին համապատասխանող կրթական ծրագրի բոլոր բաղադրիչները, ընդ որում հաշվարկած միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ մագիստրոսական թեզի ձևակերպումը և պաշտպանությունը:

«Պատմություն» մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանողները պարտավոր են կուտակել.

- 3 կրեդիտ ընդհանուր դասընթացների կրթամասից,
- 6 կրեդիտ մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկայից:

### **Մասնագիտական ավարտական պահանջներ**

Մնացած 111 կրեդիտային միավորներից 34-ը տրամադրվում է մագիստրոսական կրթական ծրագրի «Գիտահետազոտական աշխատանք» կրթամասով նախատեսած բաղադրիչներին, իսկ 77 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով «Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներից և մասնագիտացման չափորոշիչներով սահմանված կարողությունների, հմտությունների և կոմպետենցիաների ձեռքբերման պայմանից, որն ապահովվում է ՄՊԴ և ՄԱ կրթամասերի առաջարկվող առարկայացանկերով:

## **12. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը**

Համակարգի հիմնադրույթները.

ՎՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

1. ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

2. Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատ-րաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

3. Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած գիտելիքների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:

4. Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում դասընթացի ուսումնասիրված բաժինների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը`

ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը` կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,

բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը` հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,

գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը:

5. Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

6. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից և ամփոփվում ուսումնական վարչությունում:

7. Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով`

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,

գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում

ե) ստուգման արդյունքների ինտեգրում` դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

### **13. Գնահատման մեթոդաբանությունը**

8. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացների կարևորությունից, ինչպես նաև մագիստրոսական ծրագրի բնույթից` «Պատմություն» մասնագիտության մագիստրատուրայի բոլոր դասընթացներն ավարտվում են քննությամբ:

9. Հանրագումարային քննությանը ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագումարային քննության (այսուհետ՝ Հանրագումարային քննություն) հետ մեկտեղ նախատեսվում է 2 ընթացիկ քննություն(ըստ աշխատանքային պլանի): Ընթացիկ քննությունը կամ նրա մի մասը, որպես կանոն, անցկացվում է գրավոր (ուսանողների կամ տվյալ առարկայի դասախոսի հիմնավորված առաջարկությամբ և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով):

- Սահմանվում են ընթացիկ քննության առաջադրանքի հետևյալ ձևերը՝ հարցաշար, կարճ շարադրանք, թեսթ, վերջիններիս զուգակցում:
- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի առնվազն 8 միավորով գնահատվող հատվածը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով:
- Հանրագումարային քննության ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը:

10. Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

11. Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքնն.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի՝

11.1. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1 :

11.1.1.Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է՝ 5 միավոր - դասախոսություններին հաճախելու համար, իսկ 15 միավոր - գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքներին հաճախելու համար(հավելված 1):

11.1.2.Լսարանային պարապմունքներին հաճախումները որոշվում են համաձայն հետևյալ հաշվարկի.

$$\text{ՀՄ}=\text{Դ}+\text{Գ},$$

որտեղ՝

ՀՄ-հաճախումներին հատկացվող միավորը

Դ-դասախոսությունների մասնակցությանը միավորը



Գ-գործնական (սեմինար, լաբորատոր) պարապմունքների մասնակցությանը միավորը

11.1.3. Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

11.1.4. Դասընթացի լսարանային պարապմունքների հաճախումների համար հատկացվող միավորը որոշվում է ըստ հաճախումների քանակի և համարժեք տոկոսի (հավելված 1):

11.1.5. Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է դասախոսը կամ խմբի (կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:

11.1.6. Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և (կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր անսվա վերջում ակադեմիական խորհրդատուի կամ դեկանի կողմից ստանում է նախազգուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:

11.1.7. Տվյալ անսվա ընթացքում համապատասխան փաստաթղթով վավերացված հարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար դեկանատի գրավոր թույլտվությամբ ամբիոնը կազմակերպում է չկատարած լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն: Այդ դասաժամերին ուսանողների մասնակցության դրական արդյունքների դեպքում բացթողումները համարվում են լրացված:

11.1.8. Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

11.2. Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր:

11.2.1. Ինքնուրույն աշխատանքի ձևերից են՝ ռեֆերատը, անհատական տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն :

11.2.2. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:

11.2.3. Եթե ինքնուրույն աշխատանքը (անհատական առաջադրանքը) նշանակված ժամանակահատվածում կատարված է առնվազն կիսով չափ և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատվում է դրական (8-20 միավոր):

11.2.4. Բոլոր առաջադրանքների դրական գնահատականների միջինի դեպքում (8-20 միավոր) ուսանողը ստանում է ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված 10 միավորը: Հակառակ դեպքում ուսանողն ինքնուրույն աշխատանքի համար միավոր չի վաստակում (տեղեկագրում գրվում է զրո):

11.2.5. Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները նշանակվում են մատյանում և տեղեկագրում:

11.3. Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանն ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ3), որը գնահատվում է 20 միավորով:

11.3.1. Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցությունը և ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում:

11.3.2. Կիսամյակում դասընթացի գործնական (սեմինար) ու լաբորատոր աշխատանք-ներին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

11.3.3. Դրական (8 և ավելի) գնահատականների միջինի դեպքում ամփոփիչ գնահատման տեղեկագրում ուսանողին տրվում է 20 միավոր, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

11.4. Ուսուցանվող նյութի` ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (Գ4):

11.4.1. ընթացիկ քննությունների դրական գնահատականների միջինը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական:

11.4.2. Տվյալ դասընթացի ընթացիկ քննություն(ներ)ից 8-ից ցածր միավոր ստացած կամ ընթացիկ քննությանը չներկայացած ուսանողը հնարավորություն է ստանում այն (վերա)հանձնելու հանրագումարային քննության օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում:

11.4.3. Բանավոր քննության թույլատրվում են այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատականներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում (հանրագումարային քննության նախորդ օրը ընթացիկ քննություն(ներ)ը հանձնած ուսանողը հանրագումարային քննության չի թույլատրվում):

11.4.4. Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով: Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է:

11.4.5. Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում:

11.5 Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (Գ5), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են 11-20 միավորներով, դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը):

11.5.1. 10-ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր:

11.6. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների գնահատումից (Գ6), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

11.6.1. Ուսանողի ձեռք բերած կարողությունները գնահատվում են 8-20 միավորներով/քննության միավորին համարժեք/, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական:

12. Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գքնն = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

13. Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գստ. = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

14. Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և(կամ) անհատական պարապմունքներ՝ ըստ ժամանակացույցի:

15. Կուրսային աշխատանքի կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է ՎՊՅ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգերով:

16. Պրակտիկական գնահատվում է քննության ձևով՝ 100 միավորանոց սանդղակով՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական

կամ արտադրական պրակտիկաների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգով»:

17. Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման մասին» կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով):

#### **14. Կիրարկման ընթացակարգը**

1. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում): Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8-միավորանոց թեստային առաջադրանք:

2. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

3. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

4. Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

5. Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

6. Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:

7. Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):

8. Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը

համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

34. Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:

35. Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):

36. Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է ,չներկայացած: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

### **15. Ստուգարքների ամփոփումը**

37. Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր ,կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

38. Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական սեմինար պարապմունքները :

39. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:

40 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

### **16. Քննությունների անցկացումը**

41. Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջան-ներում՝ 19-20-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

42. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ:

43. Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:

44. Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:

45. Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կան այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:

46. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

47. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

48. Տվյալ առարկայից դրական գնահատական ( 58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

49. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

50 Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

51. Քննության չի թույլատրվածե (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կան տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,

52. բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և ,Փոխանցվում է գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

53. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական

գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

54. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

55. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

### **17. Գնահատման սանդղակը և նշագրումը**

56. ՎՊՅ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

57. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է ,չստուգվածե, կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

58. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

59. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս ,Ակադեմիական ազնվության կարգեր) այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

### **18. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը**

60 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն

արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

61. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

62. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը
- գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը
- վարկանիշային միավորները (ՎՄ)
- միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

63. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

64. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$ԳԿ = \sum (\text{Կրեդիտ})$$

65. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է  $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360 \cdot 500$  հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

66. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:



67. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

68. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):

69. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

## 19. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

70. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

71. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Հանալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

72. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

73. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

74. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

75. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

## 20. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

76. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

77. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

78. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ (.գերազանցե գնահատականներ ):

79. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

## **21. Կրեդիտների փոխանցումը**

80. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն ,Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի:

## **22. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը**

81. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

83. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

84. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

85. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Զամալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

**Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար  
հատկացվող միավորները և համարժեք տոկոսները**

Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12
61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

Հավելված 2

Ուսումնառության արդյունքների գնահատման 100 -միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5- բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100- բալանոց համակարգի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
---	--	-----------------------------------

«գերազանց» (5)	96-100	A <sup>+</sup>
«գերազանց» (5)	91-95	A
«գերազանց» (5)	86-90	A <sup>-</sup>
«լավ» (4)	81-85	B <sup>+</sup>
«լավ» (4)	76-80	B
«լավ» (4)	71-75	B <sup>-</sup>
«բավարար» (3)	67-70	C <sup>+</sup>
«բավարար» (3)	62-66	C
«բավարար» (3)	58-61	C <sup>-</sup>
«անբավարար»	0-57	D
«ստուգված»	58-100	S
«չստուգված»	0-57	U

### 23. Ծրագրի եզրափակիչ ատեստավորում

1. Մագիստրատուրայի ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) կատարումով ու պաշտպանությամբ:

2. Մագիստրոսական թեզով նախատեսված աշխատանքները կատարվում են ուսումնառության 2-4 կիսամյակներում՝ ստացված գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա՝ բուհում սովորելու ընթացքում (4 տարի բակալավր, 2 տարի մագիստրոս): Մագիստրոսական ատենախոսության թեմաները և ղեկավարները որոշվում են թողարկող ամբիոնի կողմից՝ ըստ մագիստրոսական ծրագրերի ուղղությունների, համաձայնեցվում մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ, քննարկվում ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդում և ուսումնառության առաջին կիսամյակի վերջում առաջարկվում ուսանողներին: Մագիստրատուրայի ուսանողը առաջին կիսամյակի վերջին գրավոր դմում էներկայացնում համապատասխան թողարկող ամբիոնի վարիչին՝ մագիստրոսական ատենախոսության թեման և ղեկավարի հաստատման խնդրանքով:

3. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) թեզի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսման ուղարկելու կազմակերպում,

դ) մագիստրոսական թեզի պաշտպանությունն պետական քննական հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

4. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը գնահատվում է 100-բալանոց սանդղակով:

.5. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման հետևյալ միավորները.

1 Ներկայացման որակը- 30

2 Ձևակերպման որակը -20

3 Կատարման ինքնուրույնության աստիճանը- 30

4 Արդիականությունը (նորույթը)- 20

Ընդամենը- 100

#### **.24. Կրեդիտների փոխանցումը**

1. Այլ բուհերից ՎՊՀ-ի մագիստրատուրայի կրթական ծրագիր փոխադրվելու դեպքում փոխանցելի են տվյալ բուհում առանձին դասընթացներից, դասընթացների խմբից, կամ ուսումնառության որոշակի շրջանից կուտակած կրեդիտները: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ և ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

2. Այլ ուսումնական ծրագրից ՎՊՀ մագիստրոսի ուսումնական ծրագիր կրեդիտների փոխանցումը հնարավոր է, եթե.

ա) փոխանցվող կրեդիտները կուտակվել են ՎՊՀ մագիստրոսական ծրագրի բաղադրիչներին համապատասխանող դասընթացներից և այլ կրթական մոդուլներից,

բ) կան կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՎՊՄԻ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման հարցերով զբաղվում է ՎՊՀ-ի ուսումնամեթոդական վարչությունը:

### **Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները**

1. Կրեդիտային համակարգով մագիստրատուրայում սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը նշանակում է մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներից:

2. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը պատասխանատու է մագիստրոսի պատրաստման որակի համար:

3. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը վերահսկում է մագիստրոսական ուսումնական պլանի մշակումը, մասնակցում է դրա մասնագիտական առարկայախմբի բովանդակության ձևավորմանը, վարում է ուսումնական պլանով նախատեսված մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարը, անցկացնում է այդ սեմինարի պլանին և ծրագրին համապատասխանող ուսումնական պարապմունքներ, վերահսկում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի կատարումը:

4. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը իրականացնում է մագիստրոսական ծրագրի ուսումնական և գիտահետազոտական հատվածների կատարման և մագիստրատուրայի գիտական ղեկավարների գործունեության վերահսկողությունը, կազմակերպում է մագիստրոսական ատենախոսությունների թեմաների փորձաքննական գնահատում:

5. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը ներկայացնում է ուսանողի շահերը տարբեր ստորաբաժանումներում, կազմակերպում է խմբային և անհատական խորհրդատվություններ ուսանողների համար՝ ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի շուրջ:

## **25. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՀ-ի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

## Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

### 1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Պատմաաշխարհագրական ֆակուլտետում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ:

Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:



**02201.01.7 «Պատմություն» մասնագիտության  
մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք  
II. Ընդհանուր դասընթացների կրթամաս**

**ԻՏՄՄ/ մ–0677 Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում(3 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ(14ժամ դասախոսություն, 26 ժամ գործնական),  
1-ին կիսամյակ, ստուգարք

**Նպատակը**

Ուսանողներին գինել բանասիրական գիտությունների բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով: Խորացնել և ընդլայնել ուսանողների՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքները: Ուսանողներին տալ գաղափարներ՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների ու ինֆորմացիոն համակարգերի, դրանց աշխատանքի սկզբունքների, ինչպես նաև մարդկային գործունեության տարբեր ոլորտներում կիրառության վերաբերյալ:

**Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.  կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել պրակտիկ խնդիրներ լուծելիս,
2.  կկարողանա տիրապետել ինֆորմացիոն որոնողական համակարգերի կիրառության մեթոդներին:

**Բովանդակությունը.**

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները, նրանց բնույթը, զարգացման հիմնական փուլերը: Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ: Հիմնական գաղափարներ ու հասկացություններ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հիմնական պատմական էտապներն ու ժամանակակից մակարդակը: Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեխնիկական, մեթոդոլոգիական ու կիրառման տեխնիկական հիմունքները: Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ու կիրառման տեխնիկան, ինֆորմատիկան ու հաշվողական տեխնիկան:

Ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաներն ու նրանց կիրառության հիմնական բնագավառները

Թեմա 1. Ինֆորմացիոն որպես ինֆորմացիոն տեխնոլոգիաների կարևորագույն բաղկացուցիչ մաս, նրա ձևավորման, կարգավորման, կազմակերպման, մշակման, հաղորդման ու պահման մեթոդներն ու եղանակները: Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը հասարակական գործունեության տարբեր

բնագավառներում (գիտություն, արտադրություն, կրթություն, տրանսպորտ ու կապ, բիզնես, մարքեթինգ և այլն):

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության և ևս և մասնագիտական տարբեր ոլորտներում

Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության պրոցեսի կառավարման ու կազմակերպման գործում: Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը տվյալ մասնագիտության գծով հեռաուսուցման, ծրագրավորված և էլեկտրոնային ուսուցման կազմակերպման գործում: Թեմա 3. Ուսուցման և գիտելիքների գնահատման համակարգչային ավտոմատացված ուսուցանող համակարգեր: Թեմա 4. Բանասիրական գիտությունների բնագավառի որոշ տվյալների ու գիտելիքների բազաների նախագծումը, մշակումն ու շահագործումը: Թեմա 5. Ինֆորմացիոն ցանցեր և դրանցում ինֆորմացիայի կազմակերպման ուղորմման եղանակները: INTERNET միջազգային գլոբալ ինֆորմացիոն ցանցն ու նրանում ինֆորմացիայի որոնման համակարգերը:

## **. II Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս**

### **Պ/մ-1179 Մերձավոր արևելյան արդի հիմնախնդիրները (5 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)  
2-րդ կիսամյակ, քննություն

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արդի դարաշրջանի մերձավորարևելյան հիմնախնդիրներին, խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները արդի դարաշրջանի մերձավորարևելյան հիմնախնդիրների վերաբերյալ, ուսանողներին սովորեցնել պատմահամեմատական մեթոդով կապեր ստեղծել հայոց պատմության և մերձավորարևելյան տարածաշրջանի պատմության հետ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիսամյա արդի դարաշրջանի մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումները, դրանց հնարավոր հետևանքները ժամանակակից աշխարհում ընթացող զարգացումների վրա
2. Կլարոդանա ցույց տալ ընթացող հակամարտությունների պատճառները, մերօրյա իրավիճակը, կայունությանն ու խաղաղությանը միտված բանակցությունների ընթացքին, դրանց հնարավոր հետևանքները Մերձավոր Արևելքում ապրող մեր հայրենակիցների վրա
3. Կտիրապետի արդի դարաշրջանի Մերձավորարևելյան հիմնախնդիրներին, առարկայի դասավանդման մեթոդոլոգիային, աղբյուրների հետ աշխատելու ձևերին

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Իսրայելի պետության ստեղծումը: Թեմա 2. Պաղեստինա-իսրայելյան հակամարտության սկիզբը: Թեմա 3. 1967 թվականի հունիսի 5-ին սկսված վեցօրյա պատերազմը: Թեմա 4. Պաղեստինյան քաղաքական և ռազմական կառույցները Լիբանանում 1958-1975թթ: Թեմա 5. Պաղեստինի խնդիրը 1970-1980-ական թվականներին: Թեմա 6. Քաղաքական մթնոլորտի բարելավումը Մերձավոր Արևելքում և արաբա-իսրայելական փոխհարաբերություններում: Թեմա 7. Մերձավորարևելյան կոնֆլիկտի քրդական շերտը

### **Պ/մ-1176 Հին Հունաստանի մշակույթի գեներալը (5 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)  
1-ին կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական պատկերացումներ հին հունական մշակույթի սկզբնավորման, պատմական զարգացման, հին աշխարհի այլևայլ մշակույթների հետ նրա փոխազդեցության և փոխհարստացման, դարերի ընթացքում նրա ներքին բովանդակության մեջ կատարված ոճական, գաղափաևախոսական և այլ զանազան փոփոխությունների մասին, ձևավորել տեսական հիմք՝ հին աշխարհի պատմության և մշակույթին տարբեր հիմնախնդիրները խորությամբ ըմբռնելու նպատակով:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. Կիմանա հին հունական մշակույթի սկզբնավորման, ձևավորման և զարգացման օրինաչափությունները, կարողանա նրա զարգացման գործընթացը կապել հին հունական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման ոլորտում կատարված գործընթացներին:
2. Կկարողանա հստակորեն սահմանել հին հունական մշակույթի սկզբնավորման և զարգացման պատմաաշխարհագրական արեալը, նրա առանձգական բնույթը, տալ էգեյան քաղաքակրթության տիպաբանությունը, աղերսներ տեսնել հին հունական և հին եգիպտական, փոքրասիական, միջագետքյան մշակույթների ձևավորման ու զարգացման պրոցեսների միջև, հասկանալ ժամանակի ընթացքում դրանց սոցիալ-դասակարգային բովանդակության մեջ կատարված փոփոխությունները: Գնահատել հին հունական մշակույթի ձևավորման գործում աշխարհագրական, բնակլիմայական, ներքին և արտաքին քաղաքական, միգրացիոն, դեմոգրաֆիական և այլ գործոնների ազդեցությունը:
3. Կտիրապետի Հին Հունաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքներին, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններին:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հին հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները. Թեմա 2. Կրետեական մշակույթը. Թեմա 3. Միկենյան մշակույթը. Թեմա 4. Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: «Մուր դարաշրջանի» հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը: Թեմա 5. Հին հունական գրականության ակունքները: Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը. Թեմա 6. Հունական արվեստի «Արևելյան ոճի» ժամանակաշրջանը: Թեմա 7. Արխաիկ դարաշրջանի հունական արվեստը: Թեմա 8. Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները. Թեմա 9. Հունական գրականությունը ք.ա 7-5-րդ դարերում: Թեմա 10. Դասական դարաշրջանի հունական արվեստը: Թեմա 11. «Ֆիդեասի դարաշրջան»-ի հունական ճարտարապետությունն ու արվեստը. Թեմա 12. Հունական դրամատուրգիայի «ոսկեդարը»: Թեմա 13. ք.ա. 4-րդ դարի հունական արվեստը: Թեմա 14. Դասական դարաշրջանի հունական պատմական արձակը:

### **Պ/մ-1182 Հարավսլավիայի մասնատումը (4 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)  
3-րդ կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է բացահայտել քաղաքական ճգնաժամի հասունացման պատճառները և հետևանքները Հարավսլավիայում 20-րդ դարի 90-ական թվականներին: Մասնավորապես ներկայացված է ՀՍՀՀ-ում ծավալված ազգային ինքնորոշման շարժումները, ինչպես նաև քաղաքական ճգնաժամի հասունացումը Կոսովոյում, Խորվաթիայում, Սերբիայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Սլովենիայում: Փորձել ենք ներկայացնել Հարավսլավական ճգնաժամի լուծմանն ուղղված ամերիկյան քաղաքականության վերլուծությունը: Անդրադարձել ենք նաև հարավսլավական ճգնաժամի կարգավորման գործում միջազգային կազմակերպությունների դիրքորոշմանը:

### **Դասընթացի ուսուննասիրման արդյունքում սովորողը**

1. Կիմանա «Հարավսլավական ճգնաժամը և միջազգային հանրությունը» առարկայի դասավանդման դերն ու նշանակությունը Հարավսլավիայում 20-րդ դարի 90-ական թթ-ներին հասունացած ճգնաժամի լուսաբանման գործում, Հարավսլավական ճգնաժամի հարցում գերտերությունների, ինչպես նաև միջազգային հանրության դիրքորոշման մասին
2. Կկարողանա կատարել Հարավսլավական ճգնաժամի վերաբերյալ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն, գնահատել Հարավսլավիայում 20-րդ դարի 90-ական թվականներին առանցքային իրադարձությունների, քաղաքական գործընթացների հետևանքները
3. Կտիրապետի՝ Հարավսլավական ճգնաժամի ժամանակակից քաղաքական մեկնաբանություններին, քաղաքական իրադարձությունների, փաստերի վերլուծությանը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Բալկանյան հիմնահարցի պատմական անցյալը: Հարցի սկզբնավորման նախադրյալները: Թեմա 2. Քաղաքական ճգնաժամի խորացումը Հարավսլավիայում 1990-1991թթ և գերտերությունները: Թեմա 3. ԱՄՆ-ի «խաղաղարար գործունեությունը» Հարավսլավիայում 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին: Թեմա 4. Ռազմական գործողությունները նախկին Հարավսլավիայի տարածքում 1991-1995թթ. Թեմա 5. ԱՄՆ-ի քաղաքականության արդյունքները նախկին Հարավսլավիայի տարածքում: 1998-1999թթ ռազմական գործողությունները ՀՄՀ-ի դեմ

### **Պ/մ-1180 ԽՍՀՄ առաջնորդները (7 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ (42 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)  
2-րդ կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ժամանակակից ռուսական և արևմտյան պատմագիտությունների գնահատականների հիման վրա ուսանողներին կայուն գիտելիքներ հաղորդել ԽՍՀՄ առաջնորդների հասարակական-քաղաքական և միջազգային գործունեության մասին, ճիշտ ներկայացնել նրանց քաղաքական դիմանկարը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. Կիմանա ԽՍՀՄ առաջնորդների հասարակական-քաղաքական և միջազգային գործունեության մասին, ճիշտ ներկայացնի նրանց քաղաքական դիմանկարը:
2. Կկարողանա ներկայացնել ԽՍՀՄ առաջնորդների գործունեությունը, բացահայտել նրանց դերը քաղաքական գործընթացներում, կատարել պատմագիտական վերլուծություններ, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում

3. Կտիրապետի խոր և համակողմանի գիտելիքների, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1 XX դարի չար հանճարը՝ Վ. Ի. Լենին: Թեմա 2. Ի.Վ. Ստալին. հաղթարշավ և ողբերգություն: Թեմա 3. Ն.Ս.Խրուշչով՝ ազդակային բարենորոգիչը: Թեմա 4. Լ.Ի.Բրեժնև՝ մարշալը, «հերոսը», դափնեկիրը: Թեմա 5. Յու. Վ. Անդրոպով՝ ՊԱԿ-ի երկարամյա ղեկավարը: Թեմա 6. Կ.Ու. Չերնենկո՝ կուսակցության աստիճանավորը: Թեմա 7. Մ.Ս. Գորբաչով՝ վերջին լենինյանը:

#### **Պ/մ-1185 Արդի միջազգային քաղաքական կազմակերպությունները (5 կրեդիտ)**

Շաբաթական 5 ժամ (36 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել արդի միջազգային կազմակերպությունների ծագման պատմությանը պատմական վաղ շրջանից մինչև մեր օրերը, ցույց տալ դրանց կազմավորման մեխանիզմները, պատմական անհրաժեշտությունը, պետությունների ձգտումը միջազգային համագործակցության ոլորտում կնճռոտ հարցերը խաղաղությամբ կարգավորելու ուղղությամբ:

Առարկան իր առջև խնդիր է դնում հարստացնել ուսանողների գիտելիքները արդի քաղաքականության դժվարին հարցերի խաղաղ հարթեցման ոլորտում միջազգային կազմակերպությունների ունեցած դերի մասին գիտելիքներով:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա կարևոր միջազգային քաղաքական կազմակերպությունների՝ ինչպես օրինակ Ազգերի Լիգայի, ՄԱԿ-ի, Եվրոխորհրդի, ԵԱՀԽ-ի և այլնի ստեղծման, կազմավորման և գործունեության մասին, այս կազմակերպությունների դերի, պատմական խնդիրների, միջազգային կնճռոտ հարցերը և դրանց խաղաղ կարգավորման ուղիների մասին, կազմակերպությունները գործառույթները արդի փուլում, դրանց ջանքերը միջազգային կառույցները ժողովուրդների համագործակցության լավագույն միջոցներ ծառայեցնելու գործում:
2. Կկարողանա ճիշտ գնահատել ժամանակակից միջազգային քաղաքական կազմակերպությունների դերը համաշխարհային քաղաքականության մեջ, գնահատել արդի միջազգային քաղաքական կազմակերպությունների ունեցած ազդեցությունը և խաղացած դերը միջպետական հարաբերություններում և համաշխարհային քաղաքականության մեջ առհասարակ, բացահայտել արդի միջազգային քաղաքական կազմակերպությունների խնդիրները և գործառույթները ինչպես քաղաքականության մեջ, այնպես էլ մյուս ոլորտներում, վերլուծել արդի միջազգային քաղաքական կազմակերպությունների գործունեության դրական և բացասական կողմերը:
3. Կտիրապետի արդի միջազգային քաղաքական կազմակերպությունների պատմության և գործունեության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների, միջպետական ամենատարբեր գործընթացներին և միջազգային քաղաքականության կարևոր օրինաչափություններին:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1 Արդի միջազգային քաղաքական կազմակերպությունների առարկան, խնդիրները, աղբյուրները: Թեմա 2. Միջպետական քաղաքական կազմակերպությունների նախատիպերը վաղ շրջանից մինչև 20-րդ դարի սկիզբը: Թեմա 3 Ազգերի Լիգան.

կառուցվածքը, գործունեությունը: Թեմա 4 Գաղութային համակարգը առաջին աշխարհամարտից հետո: Ազգերի լիգայի մանդատային համակարգը: Թեմա 5 Ազգերի լիգայից դեպի ՄԱԿ: Թեմա 6 ՆԱՏՕ: Թեմա 7 Եվրոմիություն: Թեմա 8 Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ: Թեմա 9 Եվրոխորհուրդ: Թեմա 10 Միջազգային հեղինակավոր ոչ քաղաքական կազմակերպություններ: Թեմա 11 ԱՊՀ: Թեմա 12 Մեծ ութնյակ: Թեմա 13 Մեծ քսանյակ: Թեմա 14 Բրիտանական համագործակցություն: Թեմա 15 Չճանաչված պետությունների միություն: Թեմա 16 Հարավ-Արևելյան Ասիայի երկրների ասոցացիա, Աֆրիկյան Միություն: Թեմա 17 Արաբական երկրների լիգա: Արաբական մագրիբի միություն:

### **Պ/մ-1181 Քաղաքակրթությունների պատմություն (5 կրեդիտ)**

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ <<Քաղաքակրթությունների պատմություն>> հասկացության ձևավորման, նրա պարբերացման, ժամանակագրության, հասարակական առաջընթացի օրինաչափությունների, նոր դարաշրջանի քաղաքակրթության, լուսավորության հասարակական մտքի ձևավորման, համաշխարհային պատմության մեջ քաղաքակրթությունների խաղացած դերի մասին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա քաղաքակրթությունների տեսությունների անդրադարձը համաշխարհային տեսությունների պատմության մեջ, պատմական գործընթացի օրինաչափությունները և շարժիչ ուժերը, մարդու տեղը պատմական գործընթացում, քաղաքակրթությունների առանձնահատկությունները, քաղաքակրթության ներդրումը համաշխարհային քաղաքակրթությունների պատմության մեջ, աշխարհագրական մեծ հայտնագործությունների դերը, քաղաքակրթությունների կայացման առանձնահատկությունները, երկրների զարգացման հիմնական միտումները
2. Կկարողանա վերլուծաբար մոտենալ պատմական անցյալի դեպքերին ու իրադարձություններին, կատարի ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ, զուգահեռներ անցկացնի դրանց միջև:
3. Կտիրապետի Համաշխարհային պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Քաղաքակրթությունների տեսությունների անդրադարձը համաշխարհային տեսությունների պատմության մեջ: Թեմա 2. Եգիպտական քաղաքակրթությունը համաշխարհային պատմության մեջ Թեմա 3. Հնդկական քաղաքակրթություն : Թեմա 4. Չինական քաղաքակրթություն: Թեմա 5. Հին Հռոմեական քաղաքակրթություն: Թեմա 6. Բյուզանդական քաղաքակրթություն: Թեմա 7. Արաբական իսլամական քաղաքակրթություն: Թեմա 8. Եվրոպական Արևմուտք. Մինչհնդուստրիալ քաղաքակրթության առաջացումը: Թեմա 9. Եվրոպական արքայազնի Ոսկե դարը: Թեմա 10. Ինդուստրիալ քաղաքակրթության առաջացումը:

### **Պ/մ-1183 20-րդ դարի ականավոր դեկավարները (5 կրեդիտ)**

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է XX դարի ականավոր գործիչների գործունեության օրինակով ուսանողներին ծանոթացնել նորագույն պատմության կարևորագույն իրադարձություններին, խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները համաշխարհային պատմության վերաբերյալ, ուսանողներին սովորեցնել պատմահամեմատական մեթոդով կապեր ստեղծել համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունների միջև, ձեռք բերած գիտելիքներն և ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, նախապատրաստել մանկավարժական և գիտական հետազա գործունեության:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա XX դարի այն քաղաքական գործիչների գործունեությունը, որոնք ակնառու հետք են թողել համաշխարհային պատմության ընթացքի վրա: Լրացուցիչ գիտելիքներ կստանա նորագույն պատմության վերաբերյալ:
2. Կկարողանա Պատմահամեմատական մեթոդով կապեր ստեղծել համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունների միջև, ձեռք բերած գիտելիքներն և ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, գնահատել պատմական գործիչ դերն ու ազդեցությունը պատմական գործընթացի վրա, բացահայտել համաշխարհային պատմության կարևորագույն հիմնախնդիրները, վերլուծել պատմական խոշոր գործիչների գործունեության դրական և բացասական կողմերը:
3. Կտիրապետի Համաշխարհային պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների: Կտիրապետի ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հիտլեր. նացիստական վարչակարգի Ֆյուրերը: Թեմա 2. Դ. Ռուզվելտ: Մարդը և քաղաքագետը: Թեմա 3 ՈՒ. Չերչիլ: «Մաշտ աճապարող» քաղաքագետը: Թեմա 4. Գեներալ Շարլ դը Գոլ: Թեմա 5. Սառ Ցզե Դուն:

### **Պ/մ-1177 Վերածննդի դարաշրջանը (5 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տեսական գիտելիքներ Վերածննդի դարաշրջանի վերաբերյալ, հանգամանորեն ներկայացնել Վերածննդի օրինաչափությունները և իրողությունները: Ուսանողների մոտ ձևավորել Վերածննդի հիմնարար առանձնահատկությունները՝ գաղափարաբանությունը և մշակույթը, բացահայտել Վերածննդի արմատական փոփոխությունների քաղաքակրթական բովանդակությունը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա Վերածննդի դարաշրջանի պատմության ուսումնասիրման խնդիրները և նպատակները, Վերածննդի դարաշրջանի մշակույթի բացառիկ դերը եվրոպական ժողովուրդների նոր աշխարհիկ մշակույթի ձևավորման, հումանիստական գաղափարների տարածման գործում:
2. Կկարողանա ընկալել Վերածնունդը որպես հասարակական, քաղաքական, աշխարհայացքային և մշակութային երևույթ, ցույց տալ Վերածննդի հիմնական

առանձնահատկությունները՝ գաղափարաբանությունը և մշակույթը, գնահատել Վերածննդի դերը նոր հասարակարգի ձևավորման գործում, բացահայտել Վերածննդի արմատական փոփոխությունների քաղաքական բովանդակությունը, վերլուծել Վերածննդի դարաշրջանի օրինաչափությունները և իրողությունները:

3. Կտիրապետի Վերածննդի դարաշրջանի ձեռքբերումներին, պատմագիտության ժամանակակից ձեռքբերումներին, պատմական երևույթների և փաստերի վերլուծությանը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Վերածննդի դարաշրջանը՝ որպես եվրոպական երկրների մշակութային և գաղափարական զարգացման նոր դարաշրջան: Թեմա 2. Իտալական վաղ վեածնունդը և հումանիզմը: Թեմա 3. Վաղ վերածննդի իտալական մշակույթը: Թեմա 4. Բարձր և ուշ վերածննդի իտալական մշակույթը: Թեմա 5. Հումանիստական շարժման ծավալումն Իտալիայում բարձր և ուշ վերածննդի դարաշրջանում: Թեմա 6. Վերածննդի դարաշրջանի բնափիլիսոփայությունը և գիտությունը, սոցիալ-քաղաքական միտքն Իտալիայում: Թեմա 7. Անգլիական Վերածնունդը: Թեմա 8. Գերմանական Վերածնունդը: Թեմա 9. Ֆրանսիական Վերածնունդը: Թեմա 10. Իսպանական Վերածնունդը: Թեմա 11. Վեածննդի և հումանիզմի տասածումը Եվրոպայում 16-17-րդ դարերում: Թեմա 12. Նիդեռլանդական վերածնունդը:

### **Պ/մ-1186 Մասնության պատմություն (7 կրեդիտ)**

Շաբաթական 6 ժամ (36 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)  
4-րդ կիսամյակ, քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորել մարդկության պատմության հնագույն գաղտնի կազմակերպություններից մեկի՝ մասոնների ծագման, կազմավորման, տարածման, գաղափարախոսության, համաշխարհային պատմական գործընթացներին մասնակցության, ժամանակակից աշխարհում նրանց ունեցած տեղի ու դերի մասին, խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական փոփոխությունները պատմության վերաբերյալ, ուսանողներին սովորեցնել գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, նախապատրաստել մանկավարժական հետագա գործունեության:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա մասոնների ծագումը, կազմավորումը, գաղափարախոսությունը, համաշխարհային պատմական գործընթացներին մասնակցությունը, ժամանակակից աշխարհում նրանց ունեցած դերը:
2. Կկարողանա ներկայացնել մասոնների գաղտնի ընկերությունները, բացահայտել մասոնների դերը Ամերիկայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխություններում ր 19-րդ դարի ազատագրական շարժումներում, ներկայացնել մասոնների դերը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում, կատարել պատմագիտական վերլուծություններ, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում
3. Կտիրապետի խոր և համակողմանի գիտելիքների, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Մասոնների գաղտնի ընկերությունները: Թեմա 2 Մասոնական կանոնադրությունը և մասոնական աստիճանակարգությունը: Թեմա 3. Մասոնական արարողակարգերը: Թեմա 4. Մասոնական խորհրդանիշները: Թեմա 5. Մասոնական



գաղտնի ընկերությունների կազմավորումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: Թեմա 6. Մասոնները և XVII դարի ամերիկյան հեղափոխությունը: Թեմա 7. Մասոնները և XVIII դարի ֆրանսիական հեղափոխությունը: Թեմա 8. Մասոնները և XIX դարի ազատագրական շարժումները: Թեմա 9. Մասոնական դավադրություններ. առասպել, թե իրականություն: Թեմա 10. Մասոնները ժամանակակից աշխարհում : Թեմա 11. Մասոնությունը Ռուսական կայսրությունում: Ծագումը և տարածումը: Թեմա 12. Մասոնները և հեղափոխությունները Ռուսաստանում: Թեմա 13. Ռուսական քաղաքական մասոնությունը:

### **Պ/մ-1184 Հայաստանի արդի միջազգային հարաբերություններում (5 կրեդիտ)**

Շաբաթական 2,5 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

#### **Նպատակը.**

Դասընթացը նպատակ է հետապնդում աշխարհում ընթացող հասարական-քաղաքական, քաղաքագիտական, դիվանագիտական, միջազգային ու միջպետական տարբեր բնագավառներում ընթացող իրադարձությունները խորը և գիտական վերլուծության ենթարկել և կուտակված դրական փորձի հիման վրա դիվանագիտորեն, քաղաքագիտորեն, իրավաբանորեն վերլուծել միջազգային իրադարձությունները և ազգային շահը առաջնային համարելով որ միայն ձեռք բերել կորցրածը, այլև պետությունների դաժան պայքարում ապահովել իր տեղը պապենական հողի վրա:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա աշխարհում ընթացող հասարական-քաղաքական, քաղաքագիտական, դիվանագիտական, միջազգային ու միջպետական տարբեր բնագավառներում ընթացող իրադարձությունները, դրանք խորը և գիտական վերլուծության կենթարկի
2. Կկարողանա ինքնուրույն վերլուծության ենթարկել աշխարհում տեղի ունեցող յուրաքանչյուր քաղաքական իրադարձության էությունը և այդ երևույթի մեջ Հայաստանի շահերից բխող քաղաքականությունը:
3. Կտիրապետի նախորդ տարիների, տասնամյակների պատմության մեջ Հայաստանի իշխանությունների թույլ տված սխալներին, դրանք համեմատի իրենց ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների հետ, ճիշտ կողմնորոշվի, ճիշտ ներկայացնի Հայաստանի շահերը, չկրկնելով նախորդների սխալները:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հայաստանի աշխարհառազմավարական, պատմական, քաղաքական ու տնտեսական արդի վիճակը և հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները մեր օրերում: Թեմա 2. Հայաստանը և Ռուսաստանը որպես ռազմավարական դաշնակիցներ, նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային բազմաբնույթ կապերը: Հայ-ռուսական համագործակցությունը և թուրքական գործոնը: Թեմա 3. Իրան-ԱՄՆ-Իսրայել-Եվրոմիություն հարաբերությունները և Իրանի ներքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները: Հայաստան-Իրան տնտեսական կապերը: Թեմա 4. Թուրքիան և իր հարևանները: Թուրքիայի «Հայկական քաղաքականության» արդի միտումները և Հայաստանի անվտանգության խնդիրը: Թեմա 5. Հայաստանը, ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն: ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունները: Թեմա 6. Հայաստանը, ԼՂՀ-ն և Ադրբեջանը: Որքա՞ն է տևելու Ադրբեջանի ստատուս քվոն: Թեմա 7. Հայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները: Արաբական աշխարհի զարգացումները: Թեմա 8. Քրդական գործոնի նշանակությունը մերձավորարևելյան զարգացումներում և Հայաստանի ու համայն հայության դիրքորոշումը: Թեմա 9. ԱՄՆ - ՆԱՏՕ - Չինաստան - Լիբիա - Սիրիա: Պայքար գլոբալ կառավարման և ռեսուրսների համար: Քաոսի

խորացում: Թեմա 10. Ազգային անվտանգության արդի մեկնաբանումները և ՀՀ ղեկավարության հետագա ձեռնարկումները հայկական բանակի հզորացման ուղղությամբ

**Պ/մ-1178 Հայ գաղթօջախների պատմություն (5 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)  
1-ին կիսամյակ, քննություն

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ հայկական գաղթօջախների առաջացման զարգացման, նախապատմության մասին, հանգամանորեն ներկայացնել այս կամ այն գաղթօջախում հայ բնակչության ունեցած դերը, կապերը հայրենիքի հետ, մշակութային, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքը, խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր գիտելիքները հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա առանձին երկրների հայ գաղթօջախների առաջացման պայմանները, հայ գաղթօջախների դերը հայ ազգային ազատագրական պայքարում, հասարակական քաղաքական կյանի պատմությունը հայ գաղթօջախներում
2. Կկարողանա ներկայացնել Ռուսաստանի, Ուկրաինայի, Պարսկաստանի, Օսմանյան կայսրության և մի շարք այլ պետությունների հայ գաղթօջախների պատմությունը
3. Կտիրապետի պատմական հետազոտությունների մեթոդներին, հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Ռուսաստանի հայկական գաղթօջախները: Թեմա 2. Դրիմի հայկական գաղթօջախը 14-15 դդ: Թեմա 3. Լեհաստանի հայկական գաղթօջախները 14-17 դդ: Թեմա 4. Պարսկաստանի հայկական գաղթօջախները 17-18 դդ: Թեմա 5. Կոստանդնուպոլսի հայ համայնքը 15-17 դդ: Թեմա 6 Հնդկահայ համայնքը 17-18 դդ: Թեմա 7. Բուլղարիայի հայկական գաղթօջախները 12-18 դդ.: Թեմա 8. Ռումինիայի հայկական գաղթօջախները 12 -18 դդ: Թեմա 9. Եվրոպայի հայկական գաղթօջախները 15-18դդ.

**Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)  
1-ին կիսամյակ, քննություն

**Պ/մ-1187 ՀՀ արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ.**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը և այլն

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա, թե որոնք էին ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրները (Միացյալ Հայաստանի ստեղծումը, կողմնորոշումը դեպի եվրոպական դաշնակից պետությունները, ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի 1920 թ. ստանձնումը, բարեկամական հարաբերությունների հաստատումը հարևան երկրների՝ Ռուսաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի և կովկասյան հանրապետությունների հետ՝ չմոռանալով նաև սահմանային պահանջատիրությունը):
2. Կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ, որոշ գիտական հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարել:
3. Կտիրապետի պատմական հետազոտությունների մեթոդներին, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններին

### **Բովանդակությունը.**

Թեմա 1 Հայաստանը Ռուսաստանում 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո: Թեմա 2. Թուրք-Անդրկովկասյան բանակցությունները Տրապիզոնում: Թեմա 3. Հայաստանի հանրապետության հռչակումը: Թեմա 4. Բաթումի հաշտությունը: Թեմա 5. Հայաստանի հանրապետության ճանաչումը և դիվանագիտական առաջին կայերը: Թեմա 6. Հայ-թուրքական հարաբերություններ: Թեմա 7. Գերմանիան և Հայաստանը: Թեմա 8. Հայաստանի փոխհարաբերությունները Վրաստանի հետ: Թեմա 9. Հայ-ադրբեջանական հարաբերությունները. Թեմա 10. Հայ-իրանական հարաբերությունները 1918-1920թթ. Թեմա 11. Անտանտայի տերությունները և Հայաստանը: Թեմա 12. ԱՄՆ-ը և Հայաստանը: Թեմա 13. Հայ-խորհրդային Ռուսաստանի փոխհարաբերությունները: Թեմա 14. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը:

### **Պ/մ-1188 Ցեղասպանությունների պատմություն**

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդկության դեմ գործված ոճիրների պատմությանը՝ մասնավորապես Հայոց, հրեական, Ռուանդայի Ցեղասպանություններին, Սրեբրենիցայի ջարդին և Ուկրաինայի հոլոդոմորին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա ինչ է ցեղասպանությունը, երբ է այդ տերմինը կիրառվել առաջին անգամ
2. Կկարողանա հստակ պատկերացում կազմել ցեղասպանությունները պատժելի դարձնող կոնֆերանսների, ցեղասպանությունների կանխարգելման հիմնահարցի մասին
3. Կտիրապետի ցեղասպանությունների պատմությանն առհասարակ

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հայոց ցեղասպանությունը: Թեմա 2. Ստորինների ցեղասպանությունը: Թեմա 3. Պոնտոսի հույների ցեղասպանությունը: Թեմա 4. Հոլոքոստ: Թեմա 5. Սերբերի ցեղասպանությունը: Թեմա 6. Քիմերների ցեղասպանությունը: Թեմա 7. Իրաքի քրդերի ցեղասպանությունը: Թեմա 8. Ռուանդայի ցեղասպանությունը: Թեմա 9. Դարֆուրի ցեղասպանությունը:

### Կամրնտրական դասընթաց (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար)  
2-րդ կիսամյակ, քննություն

#### Պ/մ-1192 Հայ պարբերական մամուլի պատմություն Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ցիտելիքներ տալ հայ հասարակական մամուլի պատմության, մամուլի գործիչների, հասարակական մտքի ներկայացուցիչների և, ի վերջո, հասարակական ուղղությունների (հոսանքների) գնահատականի ու դրանց նշանակության վերաբերյալ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. Կիմանա մամուլի դերը՝ որպես ժողովրդի հասարակական կյանքի արտացոլման միջոց, որպես նյութ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի մասին:
2. Կկարողանա հստակ պատկերացում կազմել հայ մամուլի անցած ուղու, նրա հետաքրքրության շրջանակների և շեշտադրված ուղղությունների մասին, կհասկանա սփյուռքահայ մամուլի ձևավորման պատճառները, կծանոթանա հայ հասարակական քաղաքական գործիչների հրապարակախոսական գործունեության հետ:
3. Կտիրապետի հայ մամուլի ծագման ու զարգացման փուլերին, պարբերական մամուլի մտքի զարգացման միջոցով կուսումնասիրեի հայ հասարակական-քաղաքական, սոցիալական կյանքի ձեռքբերումները

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1 Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը և զարգացումը: Թեմա 2. Հնդկահայ պարբերական մամուլը: Թեմա 3. Մխիթարյանների պարբերական հրատարակությունները: Թեմա 4. Արևելահայ մամուլի սկզբնավորումը: Թեմա 5. Պոլսահայ մամուլը: Թեմա 6. Չնյունահայ մամուլը: Թեմա 7. Հայ պարբերական մամուլը 19 դարի 50-60 ական թթ. և վերջին: Թեմա 8. Արևմտահայ մամուլը և Եվրոպայում լույս տեսած այլ պարբերականներ: Թեմա 9. Այլ մամուլ:

#### Պ/մ-1191 Ժամանակակից սփյուռքը

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին գիտելիքներ տալ արդի հայ սփյուռքի կառուցվածքի, սոցիալական ու մեխանիկական տեղաշարժերի, ակուլտիզացիայի, հետևանքների ու ազգային ինքնության պահպանման խնդիրների մասին: Դասավանդման ընթացքում ուսանողները գիտելիքներ են ստանում նաև սփյուռքում գործող ազգային հաստատությունների և հայրենակցական միությունների գործունեության ու սոցիալ-մշակութային վիճակի վերաբերյալ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. Կիմանա Մերձավոր ու Միջին Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Արևմուտքի ու ԱՊՀ երկրների հայկական համայնքների, ինչպես նաև Հայ դատի հանձնախմբերի գործունեության ու Հայկական հարցի և ցեղասպանության ճանաչման խնդիրների մասին:

2. Կկարողանա կատարել ընդհանրացումներ ինչպես ժամանակակից սփյուռքի առանձին գործընթացների, այնպես էլ հայ ժողովրդի պատմության միասնական համակարգում սփյուռքի տեղի ու դերի վերաբերյալ: Ձևավորել պատմական իրականության վերաբերյալ ընդհանրական գիտելիքներից եզրահանգումներ ու եզրակացություններ կատարելու հմտություններ ու կարողություններ:
3. Կտիրապետի արդի Սփյուռքում ծավալվող գործընթացները, դրանց օրինաչափություններին ու առանձնահատկություններին, ինչպես նաև հայ Սփյուռքը պարբերացնել ըստ տարածաշրջանների:

#### **Բովանդակությունը.**

. Թեմա 1 Սոցիալական տեղաշարժերը սփյուռքում: Թեմա 2. Ազգային հաստատությունները և սոցիալ-մշակութային իրադրությունը սփյուռքում: Թեմա3. Հայկական համայնքները Արևելքի երկրներում: Թեմա 4. Հայկական համայնքները Արևմուտքի երկրներում: Թեմա 5. ԱՊՀ երկրների հայկական համայնքները: Թեմա 6. Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Թեմա 7. Հայկական հարցի և ցեղասպանության ճանաչման խնդիրը

#### **Պ/մ-1193 Ֆիդայական շարժումը**

##### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ հայ ազգային ազատագրական պայքարին բնորոշ ֆիդայական շարժման պատմության վերաբերյալ, ցույց տալ այդ շարժման առաջացման շարժառիթները, փուլերը, նշանակությունը:

##### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կհմանա 19-րդ դարի 80-90-ական թվականներից մինչև 1923թ. Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակահատվածում հայ ազատագրական պայքարի պատմությունը
2. Կկարողանա վերլուծաբար մոտենալ ֆիդայական շարժման վերաբերյալ առկա տեսակետներին
3. Կտիրապետի ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

##### **Բովանդակությունը.**

. Թեմա 1 Ֆիդայական շարժման ձևավորումը, գաղափարախոսությունը: Թեմա 2. Ֆիդայական առաջին գործողությունները: Թեմա 3. Ֆիդայական պայքարը 1890-ականների վերջերին: Թեմա 4. Ֆիդայիների ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 5 Ֆիդայական պայքարը 20-րդ դարի առաջին տասնամյակում: Թեմա 6. Ֆիդայիները համայն հայության հոգևոր զավակներ: Թեմա 7. Հայոց ֆիդայիները երգերի և լեգենդների մեջ:

#### **Պ/մ-1194 Հայ ազգային ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին**

##### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ հայ ազգային ազատագրական պայքարի պատմության, անկախ պետականության վերականգնման և

օտարի լուծը թոթափելու ելած հայության անձնուրաց զավակների սխրագործությունների մասին, որոնց օրինակներով ուսանող երիտասարդության մեջ արմատավորել և զարգացնել ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. Կիմանա 19-րդ դարի 80-90-ական թվականներից մինչև 1923թ. Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակահատվածում հայ ազատագրական պայքարի պատմությունը՝ ըստ ժամանակաշրջանների և նրանց պատմական նշանակությունն ու հետևանքները, ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմական հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ժամանակակից պատմագրության գնահատականները
5. Կկարողանա վերլուծաբար մոտենալ պատմական անցյալի դեպքերին ու իրադարձություններին, կատարի ինքնուրույն եզրակացություններ, համեմատություններ, զուգահեռներ անցկացնի դրանց միջև
6. Կտիրապետի պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

#### **Բովանդակությունը.**

. Թեմա 1 Արևմտահայության վիճակը «Հայկական հարցի» նախօրյակին և դրա միջազգայնացումից հետո: Թեմա 2. Ֆիդայական շարժման ձևավորումը, գաղափարախոսությունը: Թեմա 3. Ֆիդայական առաջին գործողությունները: Թեմա 4. Ֆիդայական պայքարը 1890-ականների վերջերին: Թեմա 5. Ֆիդայիների ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 6. Ֆիդայական պայքարը 20-րդ դարի առաջին տասնամյակում: Թեմա 7. Ֆիդայիները համայն հայության հոգևոր զավակներ: Թեմա 8. Հայոց ֆիդայիները երգերի և լեգենդների մեջ: Թեմա 9. Հայ կանավորական շարժումը առաջին աշխարհամարտի տարիներին: Թեմա 10. Հայոց վրիժառուությունը: Թեմա 11. Սփյուռքի կացությունը 20-րդ դարի 70-80-ական թթ.:

#### **Կամրնտրական դասընթաց (5 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)  
1-ին կիսամյակ, քննություն

#### **Պ/մ-1190 Գունավոր հեղափոխությունները**

##### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական պատկերացումներ <<Գունավոր հեղափոխություն>> հասկացության ընդհանուր որակական գծերի մասին, գունավոր հեղափոխությունների մեխանիզմների և խորհրդանիշների մասին, գունավոր հեղափոխությունների ժամանակ արտաքին գործոնների դերի մասին, ԱՊՆ երկրներում գունավոր հեղափոխությունների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման մասին, Վրաստանում <<Վարդերի հեղափոխության>> պատճառների, ընթացքի և արդյունքների մասին, հեղափոխությունից հետո Վրաստանի իրավիճակի մասին, ռուս-վրացական պատերազմի մասին, պատկերացում տալ ՌԲկրաինայում <<Նարնջագույն հեղափոխության>> առանձնահատկությունների և ընթացքի մասին, հեղափոխությունից հետո ՌԲկրաինայի իրավիճակի մասին, ներկայացնել Ղրղզստանում <<կակաչների հեղափոխության>> առանձնահատկությունները և ընթացքը հեղափոխությունից հետո քաղաքական դրությունը Ղրղզստանում:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա գունավոր հեղափոխության ընդհանուր գծերը, մեխանիզմները, խորհրդանիշները, արտաքին գործոնների դերը գունավոր հեղափոխությունների ժամանակ, <<վարդերի հեղափոխության>> ընթացքը Վրաստանում, Ուկրաինայում <<նարնջագույն հեղափոխության>> առանձնահատկությունները, <<կակաչների հեղափոխության>> բնորոշ գծերը Ղրղզստանում:
2. ԿԿարողավա վերլուծել գունավոր հեղափոխությունների բնորոշ գծերը, մեխանիզմները, արտաքին գործոնների դերը գունավոր հեղափոխությունների ժամանակ, գունավոր հեղափոխությունների ընթացքը ԱՊՀ երկրներում, այդ գիտելիքները օգտագործել կրթադաստիրակչական գործընթացում
3. Կտիրապետի գունավոր հեղափոխությունների ուսումնասիրությունների հետ կապված պատմական գիտությունների ժամանակակից և նորագույն ձեռքբերումներին:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1 Գունավոր հեղափոխությունների ընդհանուր բնութագիրը, Թեմա 2. Արտաքին գործոնները գունավոր հեղափոխությունների ժամանակ Թեմա 3. Ռուսաստանի դիրքորոշումը գունավոր հեղափոխությունների նկատմամբ: Թեմա 4. «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում: Թեմա 5. «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում: Թեմա 6. «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում:

### **Պ/մ-1189 ԽՍՀՄ փլուզումը: ԱՊՀ կազմավորումը**

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին պատկերացում տալ այնպիսի հիմնախնդիրների մասին, ինչպիսիք են ԽՍՀՄ-ի փլուզման սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, վերակառուցման կուրսը և նրա փաստացի ձախողումը, խորհրդային հասարակության դեմոկրատիզացիան և բազմակուսակցական համակարգի ձևավորումը, ազգամիջյան հիմնախնդիրների սրումը և այլ հարցեր:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա վերակառուցման քաղաքականության ձախողման և նրա հետևանքների մասին
2. Կկարողանա հասկանա, թե ինչ է անցումային էտապը դեպի շուկայական հարաբերությունները, այդ էտապի հետ կապված տարբեր հիմնախնդիրները
3. Կտիրապետի ԱՊՀ-ի կառույցներին, կանոնադրությանը, ինչպես նաև ԱՊՀ-ի շրջանակներում ինտեգրացիայի այլընտրանքային ձևերին և կառույցներին

### **Պ/ը-0465 Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն(4 կրեդիտ)**

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական պատկերացումներ հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման առանձնահատկությունների, նրանց գաղափարախոսության, գործունեության տակտիկայից և ստրատեգիայի վերաբերյալ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմությունը, նրանց քաղաքական ծրագրերը, նրանց գործունեության պատմությունը, նրանց դերը հայ իրականության մեջ:
2. կկարողանա երլուծության ենթարկել հայ քաղաքական տարբեր կուսակցությունների պատմության հիմնախնդիրները, այդ կուսակցությունների գաղափարախոսությունը, նրանց գործունեությունը:
3. կտիրապետի հայ քաղաքական կուսակցությունների գաղափարախոսության հիմնախնդիրներին, նրանց գործունեության պատմությանը, նրանց ունեցած դերին հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանում:

### **Բովանդակությունը.**

Թեմա-1 Արմենականների կուսակցության ձևավորումը: Թեմա-2 Հնչակյան կուսակցության ձևավորումը: Թեմա-3 Հայ հեղափոխական դաշնակցության ձևավորումը: Թեմա-4 Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը 19-րդ դարի 80-90-ական թթ.: Թեմա-5 Ֆիդայական շարժումը և հայ ազգային կուսակցությունները : Թեմա-6 1890-ական թթ ինքնապաշտպանական մարտերը և հայ ազգային կուսակցությունները Թեմա-7 Հայ ազգային կուսակցությունների գործունեությունը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Թեմա-8 Առաջին աշխարհամարտը և հայ քաղաքական կուսակցությունները: Թեմա-9 Հայոց մեծ եղեռնը և հայ քաղաքական կուսակցությունները: Թեմա-10 Հայ քաղաքական կուսակցությունները և հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը:

## **Այլ բաղադրիչներ**

- 1.Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար ( 8 կրեդիտ) `1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակ
- 3.Մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա ( 6 կրեդիտ) ` 3-րդ կիսամյակ,
4. Գիտահետազոտական պրակտիկա (3 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ
5. Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (11 կրեդիտ) ` 2-րդ (3 կրեդիտ), 3-րդ (3 կրեդիտ), 4-րդ (5 կրեդիտ) կիսամյակներ:
6. Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն ( 12 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ: